**13-02/36**
**01.09.2011 թ.**

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ**

**ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՋԱՎԱԴՅԱՆ**

Գործող օրենսդրության պահանջների համաձայն ներկայացնում ենք էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվությունը:

Առդիր 2 էջ:

Հարգանքով՝

**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ** **ԱՐՄԵՆ ՆԱԼՋՅԱՆ**

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ


«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 532007, 538904, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am


**Էական փաստերը և տեղեկութենները ներառող հաշվետվություն թիվ 10, 01 սեպտեմբերի 2011թ.**

---

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ 933335

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 2500 ՀՀ դրամ

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| Ռուբեն Բաղայան | Գործադիր տնօրենի տեղակալ | | 01.09.2011թ. |
| Արմեն Տեր-Հակոբյան | Գործադիր տնօրենի տեղակալ | | 01.09.2011թ. |
| Դավիթ Ազատյան | Գլխավոր հաշվապահ | | 01.09.2011թ. |
| Հայկ Ավետիսյան | Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ | | 01.09.2011թ. |
| Արտակ Առաքելյան | Տարածքային կառավարման վարչության պետ | | 01.09.2011թ. |
| Սմբատ Թադևոսյան | Իրավաբանական վարչության պետ | | 01.09.2011թ. |
| Ռուբեն Հայրապետյան | Վարկավորման և միջոցների ներգրավման վարչության պետ | | 01.09.2011թ. |
| Արմեն Նալչյան | Գործադիր տնօրեն | | 01.09.2011թ. |

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՔԱՂՎԱԾՔ
## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ո Ւ Ն N. 43
### ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30 օգոստոսի, 2011թ., ժ.15-00

Նախագահող՝ Ա. Զարգարյան
Մասնակցում էին՝ Խորհրդի անդամներ

Ա. Սիմոնյանը, Ի.Մեկվաբիշվիլի /հեռախոսակապով/, Ս. Ղարիբյանը

Հրավիրված՝ Ա.Նալչյան («ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրեն), Վ.Բաբայան («ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության պետ)

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության դիմումը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ մասնաճյուղի գործունեության վայրի և անվանման փոփոխության և սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի բացման վերաբերյալ:
(զեկ. Ա.Նալչյան)

<u>Հարց 2 /Որոշում 43/02-30.08.11/</u>

Զեկուցողը ներկայացրեց Երևան քաղաքում Մ. Խորենացու 43 հասցեում գործող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ գործունեության վայրի և անվանման փոփոխության, իսկ նշված հասցեում սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ բացման առաջարկները, նշելով որ առաջարկները պայմանավորված են Երևան քաղաքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ մասնաճյուղային ցանցի ընդլայնման և գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Քննարկելով ներկայացված փաստարկները Խորհրդի անդամները դրական արձագանքեցին առաջարկներին:

Նշվեց նաև, որ մասնաճյուղերը գործելու են վարձակալական հիմունքներով ձեռք բերված տարածքներում:

Այնուհետ հավանության արժանացան մասնաճյուղերի ներկայացված կանոնադրությունները, կառուցվածքները և հաստիքացուցակները:

Ելնելով քննարկման արդյունքներից՝ **Խորհուրդը**

### ՈՐՈՇԵՑ

2.1 Հավանություն տալ Մ. Խորենացու 43 հասցեում գործող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ գործունեության վայրի և անվանման փոփոխությանը՝ նոր հասցեն՝ Տիգրան Մեծի 25 շենք, 27 շինություն, նոր անվանումը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՄԱՐԱԶՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ:

2.2 Հավանություն տալ Մ. Խորենացու 43 հասցեում սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ բացմանը:

2.3 Հաստատել Տիգրան Մեծի 25 շենք, 27 շինություն հասցեում վարձակալական հիմունքներով գործող վերանվանված «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՄԱՐԱԶՈՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ և Մ. Խորենացու 43 հասցեում վարձակալական հիմունքներով բացվող սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ կանոնադրություններին, կառուցվածքներին և հաստիքացուցակներին, համաձայնեցնելով Գործադիր տնօրենին՝ սահմանված կարգով ներկայացնել փաստաթղթերը ՀՀ Կենտրոնական բանկ:

*(Քվեարկության արդյունքները՝ 4 կողմ)*

Իսկականի հետ ճիշտ է
Խորհրդի անդամ, քարտուղար Ա.Սիմոնյան

1